




Մ Ի Օ Մ

ՈՒԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻԻ 2.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՓԵՏՐՎԱՐ 28.
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ր Ե Դ Ա Ր Զ Ի

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Ս. ՎԱՐԴԱՆԱՆ Յ
ԵՒ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ս. ԱԹՈՌՈՅՍ

Ինչպիսիք ամեն նոյնպէս եւ այս տարի դպրոցական վեց ամսեայ հաշտութենէն զինի Ս. Վարդանանց անմահ յիշատակի եւ յառաւմագործաց Վարժարանի տարեդարձի առթիւ շքեղ եւ վայելուչ հանդէս կատարուեցաւ վարժարանի մէջ ։ Հանդեսին ներկայ էին Վմեն. Սրբազան Պատրիարք Հայրն եւ Վիսաւանական ուխտիա Գեղ. Հարք եւ Լիւրարք՝ նմանապէս համայն Ուխտաւորք՝ արք. եւ կանայք ։ Հարկ չի կայ ասել, որ այսպիսի ազգային սրտառու ժողովուրդ

Թիւններն եւ հանդէսներն Վրդին յառաջագիմու թեան խորհրդաւոր դրօշմներն են ։ որովհետեւ այսպիսի հանդէսներն ազգասիրական եւ հայրենասիրական զգացումներն փառ եւ կենդանի կը պահեն, ուստի փափագելի է մեզ, որ իջ միայն Ս. Վրդնայս, այլ ամեն հայաբնակ գիւղօրէից եւ քաղաքացի մէջ շքեղ կերպիւ կատարուի Ս. Վարդանանց նահատակութեան նուիրական տարեդարձը ։

Բաջայոյս եմք, որ եթէ ամեն ճշմարիտ հայ մտածէ այդ կրօնատէր եւ

հայրենասէր նահատակաց քաջութեան և արութեան վերայ, պիտի ըզգայ, թէ ինչ նշանակութիւն ունի Վարդանանց նահատակութիւնը մեր Լիկեղեցւոյ և Լիզութեան նկատմամբ. պիտի զգայ, որ մեր այս օրուան գոյութիւնը նոցա օրինակելի անձնութիւններէն պարտիմք. վասն զի եթէ նոքա չը լինէին, թերեւս այսօր ոչ Հայաստանեայց Լիկեղեցի և ոչ Հայ — Լիզ լինէր աշխարհիս երեսին: Ուստի չեմք կարծեր, որ այս առթիւ մեր յայտնած փափագը, ամեն Հայու փափագ չը լինի:

Կատարուած հանդեսին մէջ կարդացուեցան Հայերէն. Տաճկերէն և Վաղղիարէն ձառեր. Հայերէն կարդացողներն էին Լեւոնիս Կարապետ տեան Պօլսեցի և Կարապետ Տ. Յովհաննէսեան թրակացի. Տաճկերէն՝ Վեորդ Տ. Յարութիւնեան Իսմայէլացի. իսկ Վաղղիարէն՝ Կարապետ թովմասեան Չանագ — Վալէցի Լոյս պէս կատարուեցան Հայերէն երկու տրամախօսական արարուածներ եւ կարդացուեցաւ Ս. Վարդանանց նահատակութեան առթիւ ոտանաւոր մը տրամախօսական ոճով, զոր ընթերցողը Սիօնի մէջ պիտի տեսնէ: Ի վերջոյ հանդէսն կնքեցաւ յորդորական բանիւ և օրհնութեամբ Լմեն. Սրբազան Պատրիարք Հօր:

Լհաւասիկ արժան կը համարիմք կարդացուած Հայերէն մէկ ձառը Սիօնի մէջ հրատարակելով՝ ընթերցողաց հաղորդել ոչ իբր կատարեալ գործ, այլ ի քաջալերութիւն գրող աշակերտին և իւր ընկերակցաց:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Ս. ՀԱՅՐ

ԵՒ ՅԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Երբ միանգամ ընդարձակ երկրագնդիս վերայ բնակող ազգաց վիճակը ի նկատի առնուիմք, և ուշի ուշով քննեմք, պիտի տեսնեմք, որ նոցա մէջ անզգալի և փաղտնի շարժում մի կայ. շարժում մի՛ որով ազգեր և թագաւորութիւններ իրարու կը մերձենան, ժողովուրդներ իրենց դրացեաց հետ ընտանութիւն կ'ընեն: Որով գիտութիւնք, արուեստք և վաճառականութիւնք կը ծաղկին հետզհետէ, և ազգքան զազգ անզգալապէս կը յառաջագիմէ թէ բարոյական գիտութեամբ և թէ՛ նիւթական զօրութեամբ, եւ ժամանակի որ և իցէ դիպուածոց մէջ իւր նորոգ ստացած գիտութիւնն ու զօրութիւնը յայտնելով՝ հագիւ աչոււնիս կը գոցենք և կը բանաւք և ահա՛ կը հրաշանանք և կը զարմանանք նոյն հրաշալեաց վերայ: Սակայն ո՞վ է սոյն հրաշքը գործողը, ո՞վ է սոյն շարժման պատճառը, եթէ Սէրը և Սիւնութիւնը ըսեմ՝ չը պիտի սխալիմ, այն միսթանական սէրը՝ որ իբրեւ մի սուրբ յօդակապ զմարդ իւր նմանւոյն հետ կը միացնէ այնպիսի ամրապինդ կապով մը՝ զոր և ոչ իսկ ժամանակի հզօր ձեռքը՝ կարէ խլել այս սուրբ կապը. վասն զի սէրը երկնային է և յաւիտեանական: Լհա այս սէրն է, որ խիստ սքանչելի գործքեր յառաջ կը բերէ: Սիրով նոյն իսկ յաւիտենից անմահ Լստուածը յերկնից ի ստորինս իջաւ. միտցաւ մարդկային բնութեան հետ, որով երկնքի և երկրի մէջ նորոգ խաղաղութիւն եւ հաշտութիւն հաստատուեցաւ: Ուրեմն սէրն է միակ աղբիւր եւ մայր ամենայն բարեաց, եւ նովաւ միայն կը յարատեւէ եւ

հաստատուն կը կենայ մարդկային ընկերութիւնը կամ միաբանութիւնը . իսկ առանց սիրոյ՝ անմիաբանութիւնը կը տիրապետէ մարդկան մէջ, որ քայքայելով մարդկային ընկերութեան հիմունքը կը կործանէ, որով և կը լինի աղբիւր և ծնող ամենայն չարեաց :

Իսցատրեմք խօսքերնիս .

Ինչպէս որ բնութեան մէջ ամեն բան մասունքներէ եւ տարեքներէ բաղկացած է , և սոցիալ անբաժան մի աւորութեամբն է որ աշխարհս կանգուն կը կենայ , և մարդ կենդանութիւն կը կրէ , և եթէ ասոնցմէ մէկը խանգարի աշխարհ տակն ու վրայ կ'ըլլայ եւ կը կործանի . այսպէս եւս մարդկային ընկերութիւնը եթէ իւր ամեն մասունքներով իրարու օգտին համար միաբան և միահալման գործէ՝ կրտէ հաստատուն կալ և յարատեւել , և մեծամեծ բարք եւս արտադրել : Իսկ միութիւն ըսելով՝ պարտիմք իմանալ ազգի մը անհատից ազգասիրութար իրարու հետ միանալը երկրին կամ ազգին օգտին համար . վասն զի՝ ազգ մը իւր անհատից միութեամբ կարող է իւր ունեցածն անկորուստ պահել , կարօտութիւն ունեցած բաները ձեռք բերել , և հետզհետէ յառաջագիմել , առաթուր հարկանելով ամեն նեղութիւնք եւ դժուարութիւնք : Ուրեմն՝ իւրաքանչիւր անհատի էական պարտքն է ազգասիրութեամբ օգնել իւր եղբարց , միաբան և միահալման գործելով . վասն զի ոչ ոք չէ կարող առանձին ամեն բան ընելու կաբողութիւնն ունենալ , որով չէ կարող իւր ազգին ամեն կարօտութիւնները լեցնել . միայն Վստուած է ամենակարող : Ուրեմն ամեն մարդ հանապազ կարօտութիւն ունի օգնութեան ընկերին . վասն զի բնութիւնը մարդկան զանազան ձիրքեր

շնորհած է . մէկն իր հանճարով կամ գիտութեամբն , միւսը իւր զօրութեամբ , ուրիշ մը եւս իւր նիւթական կարողութեամբ իրարու մերձեցնելով՝ կը կազմեն ամբողջ մը , և միաբան գործելով՝ յառաջ կը բերեն ազգութեւ և շահաւէտ գործ մը . նման երկասէր մեղուներու , որք իրենց թագուհւոյն իշխանութեան տակ միաբան աշխատելով և գործելով՝ իրենց բլիթները մեղրով կը լեցնեն : Մահայտալիս միաբանութեամբ միայն կը պահուի ազգի մը գոյութիւնը , ասով միայն կարող է ազգ մը շարժիլ , բլննել իւր անցեալը , բաղդատել ներկային հետ . զգալ իւր տկարութիւնը և քայլափոխել դէպ 'ի յառաջագիմութիւն : Միս միաբանութեամբ ազգեր եւ թագաւորութիւններ օրքան զօր կը գերազանցեն զերեարս Մահա Մերիկայ , այն անծանօթ երկիրը , որ չորս դար յառաջ խոր տգիտութեան մէջ թաղուած էր , իւր ժողովուրդը տգէտ , վայրենի և մարդակեր անտառներու մէջ անբանօրէն թափառական կը շրջէր , Լւերդսըսցոց ձեռքով կրթուելով՝ այսօր լուսաւոր ազգաց կարգին մէջ բարձր 'ի գլուխ կը պանծայ . վասն զի գերազանցեց նա շատ բանի մէջ քան զԼւերդսցոյն իսկ : Մահայտալի մեծ է միութեան գործած հրաշքը :

Իսկ ընդհակառակն այն ազգը կամ ժողովուրդը , որոյ անդամներն իրարու հետ սերտ միանալով չեն գործեր , այլ՝ ամենայն դք ինքզինքը մեծ և գլուխ կը սեպէ , և կը ջանայ իւր գործը կամ խորհուրդը յառաջ տանիլ , ո՛հ կը սոսկամ ըսելու . այն ազգի կործանումը մերձ է , վասն զի 'ի խանգարիլ մասանց՝ խանգարի և բուլրն , ինչու որ ազգ մը իւր ամբողջ կազմուածքով կը նմանի անուաւոր

ժամացոյցի մը՝ որուն եթէ անխնե-
րուն մէկը պակասի կամ խանդարի,
այնուհետեւ չէ կարող իւր պարտու-
պատշաճ գործողութիւնը կատարել,
այլ երբեմն կազմի կազմ կ'ընթանայ,
և երբեմն կը դադարի: Այս կը նմա-
նի մարդկային մարմնոյ մը կազմաւած-
քին, որն որ տարերքներէ բաղկացած
ըլլալով՝ նոցա միութեամբն է՝ չոր կեն-
դանի կը մնայ, և եթէ այս տարերք-
ներն իրենց սովորականէն աւելի ա-
ռաւելուն կամ նուազին, կը խանդարի
մարդկային կազմաւածքը, և մարմինը
կամ կը տկարանայ և կամ հիւանդու-
թեամբ կը մեռնի: Այսպէս և ազգ-
մը կամ ժողովուրդ մը՝ որ իւր անհա-
տից հետ միաբան չը գործեր, բնական
է որ չը յառաջագիմելէ զատ՝ օր ըստ
օրէ իւր ունեցած բարոյական և նիւ-
թական զօրութիւնքն նա կը կորու-
սանէ: Ըստ որում երբ կրակի մէջէն
նիւթը վերցնեմք՝ ոչ միայն հուրը չար-
ծարծիր և չը բորբոքիր, այլ և երթա-
լով կըստիւրի, և ի վերջոյ մոխիր կը
գառնայ: Ահ, բանի բանի ազգեր եւ
թագաւորութիւններ սոյն անմիաբա-
նութեան անցաք որկորոյն ծարսէ եւ
զան, Ահա այն Սակեդոնական հը
զօր տէրութիւնը, որ ժամանակ մը
համայն տիեզերք վեր ՚ի փայր յաւ-
ղեց, Թագաւորութիւններ և ազգեր
իւր յաղթական կառաց անխնեքուն
կոխան ըրաւ, ՚ի վերջոյ ինքն ալ կոր-
ծանեցաւ, և Հռովմէական պետու-
թեան տակ նուաճեցաւ, վասն զի՝
մեծին Աղէքսանդրի մահէն զկնի նորա
ընկածաւալ պետութիւնը զանազան
մասերու բաժնուեցաւ, իւր միու-
թիւնը քակտեցաւ, զօրութիւնը ըս-
պառեցաւ, որով անկարող եղաւ ինք-
զինքը կառավարել եւ հաստատուն
դիրքի մը մէջ դնել:

Սակայն Թողունք ընդ հանուրը, և

Եւստանտորի մեր աղգի վերայ դարձը-
նեմք այժմ մեր ակնարկը:

Հայ ազգն ալ ժամանակաւ ուրիշ
ազգաց նման ունէր իւր հայրենի եր-
կիրը Հայաստան, իւր դիւցադուն
Թագաւորները և քաջասիրտ իշխան-
ները, իւր հոյակապ եւ մարդաշատ
քաղաքները, այլ սակայն անմիաբա-
նութեան և երկարառականութեան բա-
ղուկները զոկեցին զայն այն ամեն բա-
ներէն, կորսնցուց Հայն իւր Թագա-
ւորութիւնը, աւերեցաւ Հայաստան,
եւ նա այժմ յերկիր օտար զուրկ ՚ի
հայրենեաց կը չըլլի Թափառական:
Թողունք այս ամեն Թշուառութիւն-
ները, որք հետզհետէ եկան Հայառ-
տանի վերայ, Հայն փոխանակ զգա-
լու իւր անցեալ և ներկայ աղէտից իւ-
կական պատճառները, դեռ անտար-
բեր կեցած իւր դրոսի ազգաց յա-
ռաջագիմութեան քայլերը կը հաշուէ.
ոհ, այս բարի նշան մը չէ Հոյու յա-
ռաջագիմութեան համար, վասն զի՝
այն աղգը որ իւր Թշուառութեանց
և նեղութեանց բուն պատճառները
ուշի ուշով չը քններ, եւ հասու չը
լինիր, նշան է որ նա չը կամիր յառա-
ջագիմել, վասն զի ճշմարիտ յառաջա-
գիմութեան զգացումը կը ծնանի մար-
դոյ մէջ իւր Թշուառութեանց ճա-
նաչումէն, և այն սուրբ իղձէն՝ որով
կը փափագի ըւստաւորեալ ազգաց
կարգին հասնիլ և զանոնք գերազան-
ցել: Աւրեմն սի Հայք, բանանք աչ-
քերնիս, սթափինք խոր Թմրութե-
նէն, զգանք որ մեր Թշուառութեց
և տգիտութեան պատճառը անմիա-
բանութիւնն է, այն անմիաբանու-
թիւնը՝ որ զկնի անչափ աղէտից՝ զոր
հասոյց Հայոց, այսօր եւս իւր բա-
ղուկները կը տարածէ: Ալ բաւա-
կան է, Թող դադրին այսուհետեւ
անմիաբանութեան և երկարառակու-

